



ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Մայրենի լեզուով կրթութիւն ստանալու իրաւունքը ՄԱԿ-ի կողմէ ճանչցուած մարդու հիմնարար իրաւունքներէն է, եւ որուն պաշտօնական գործադրութիւնը պարտադիր է կազմակերպութեան անդամ բոլոր երկրներուն համար: Սակայն այդ իրաւունքը բռնախլուած է Թուրքիոյ մէջ ապրող քիւրտ, արաբ, հայ, ասորի, չերքեզ եւ լազ ժողովուրդներէն: Այս հողերուն վրայ, թրքերէնէն բացի, միւս լեզուները կանոնաւոր ձեւով ձուլուած են թարգմանուած եւ արգիլուած են: Ձուլուած այդ քաղաքականութեան պատճառով Թուրքիոյ մէջ գործածուող շատ լեզուներ անհետացումի վտանգի տակ են:

Համաձայն Վտանգուած լեզուներու մասին ԵՈՒՆԵՍԿՕ-ի կողմէ պատրաստուած ատլասին, Թուրքիոյ մէջ ցարդ18 լեզուներ կ'անհետացած են, կ'անհետացումի վտանգի տակ կը գտնուին: Այդ լեզուներէն մէկը քրտերէնի Կուրմանջի բարբառն է: Լեզուներու իւրացումը եւ մշակութային ոչնչացումի քաղաքականութիւնը մարդկային արժէքներու դէմ ուղղուած լանցագործութիւններուն մաս կը կազմեն: Այդուհանդերձ, Թուրքիան տակաւին լեզուներու պաշտպանութեան միջազգային որոշումներուն չէ ենթարկուած եւ ցարդ կը շարունակէ այդ իրաւունքներուն ոտնահարումը:

Մենք՝ որպէս իրաւունքներու, Հաւասարութեան եւ Ժողովրդավարութեան Կուսակցութիւն (DEM Կուսակցութիւն), Ձեր հաստատութեան եւ միջազգային բոլոր կառոյցներուն անգամ մը եւս կոչ կ'ուղղենք կատարելու Փետրուար 21ի Համաշխարհային Մայրենի լեզուի Օրուան առիթով ստանձնած պարտականութիւնները:

Մենք կը պահանջենք պատուիրակութիւն մը ուղարկել Թուրքիա, մայրենի լեզուի իրաւունքներու խախտումներու հարցով քննութիւն բանալու անոր դէմ: Թուրքիոյ մէջ քրտերէնի (Kurmancî-Kirmanckî), արաբերէնի, հայերէնի, ասորերէնի, չերքեզերէնի, լազերէնի, ռոմաներէնի, պոսնիերէնի եւ մնացած բոլոր լեզուներու կարգավիճակը պետք է ճանչցուի:

Մենք կը պահանջենք որ Թուրքիան գործադրէ հիմնարար իրաւունքներուն վերաբերող միջազգային բոլոր որոշումները եւ կատարէ միջազգային պայմանագրերու պահանջները: Այս իմաստով, ձեր հաստատութենէն կը խնդրենք, որ անհրաժեշտ քայլեր ձեռնարկէ ՄԱԿ-ի Մանուկներու իրաւունքներու պայմանադրութեան 17րդ, 29րդ եւ 30րդ յօդուածներու նկատմամբ Թուրքիոյ վերապահումներու վերացումին եւ պայմանադրութեան գործադրութեան ուղղութեամբ:

Որպէս DEM Կուսակցութիւն՝ մենք կը նշենք Փետրուար 21ի Մայրենի լեզուի համաշխարհային օրը:

Թուլայ Հաթիմողլուարը - Թիւնճեր Պաքըրհան

DEM Կուսակցութեան համանախագահներ

